ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 3461-Ա «11» սեպտեմբերի 2024թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Աղվան և Ռոբերտ» ՍՊԸ տնօրեն՝ Աղվան Քսպոյանի դիմումը՝ Կոմիտասի պողոտայի հ.21/2 հասցեում գտնվող տաղավարի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18092023-01-0322 վկայական) զբաղեցրած հողամասի համար կնքված վարձակալության պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգելու մասին:

Կոմիտասի պողոտայի հ.21/2 հասցեում գտնվող տաղավարի կադաստրային արժեքը կազմում է 7,199,428 ՀՀ դրամ:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, Երևան քաղաքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 26-ի հ.50–Ն որոշման հավելվածով.

1. Լիազորել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից «Աղվան և Ռոբերտ» ՍՊԸ հետ կնքել համաձայնագիր՝ Կոմիտասի պողոտայի հ.21/2 հասցեում գտնվող տաղավարի զբաղեցրած ընդհանուր 30,0քմ /15,0քմ+15,0քմ/ մակերեսով հողամասի համար 25.07.2002թ. կնքված վարձակալության հ.2-3092 և 01.03.2004թ. կնքված վարձակալության հ.65/ԱԳ պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգելու և դրանցում լրացումներ կատարելու մասին՝ ներառելով պայմանագրերում հետևյալ լրացումները.

1) հ.2-3092 պայմանագրի 17-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանագրի

գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը:».

2) հ.65/ԱԳ պայմանագրի 16-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը:»:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման առաջին կետում նշված համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ